ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հուլիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության մասին» և «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-182-07.06.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 960 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-182-07.06.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆ-ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները «Ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության մասին» և «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության մասին» օրենքի նախագծի՝

1. 2-րդ հոդվածում նշվում է, որ պետական աջակցության ենթակա են 50 մլն դրամը գերազանցող ներդրումային ծրագրերը: Այս առումով գտնում ենք, որ նշված գումարի սահմանափակմամբ ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծի կարգավորումներից, ինչպես նաև դրանց կից ներկայացված հիմնավորումից պարզ չէ, թե ինչով են պայմանավորված նշված չափորոշիչն ընտրելու անհրաժեշտությունը, ինչպես նաև դրա իրականացման մեխանիզմները:

Հարկ է նշել նաև, որ կարող են լինել 50 մլն դրամից պակաս ներդրումային ծրագրեր, որոնք իրենց կարևորությամբ և տվյալ ոլորտում առավել հրատապ ներդրում կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նույնպես ունենան պետական աջակցության կարիք: Հետևաբար անհրաժեշտ է ուսումնասիրել տվյալ բնագավառի միջազգային փորձը և նախատեսել կարգավորման այն մոդելը, որն առավել ընդունելի կլինի Հայաստանի Հանրապետության համար:

Այս առնչությամբ անհրաժեշտ ենք համարում թվարկել այն նախաձեռնությունները, որոնք միտված են ծառայելու ներդրողների կարիքներին, ինչպես նաև ապահովելու ներդրումային ծրագրերի սահուն իրականացումը.

- Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ ներկայումս գործում է «eRegulations Armenia» հարթակը, որտեղ թվայնացված է 8 ոլորտներում 12-ից ավելի (նախատեսված է աստիճանաբար ընդլայնել ցանկը) ընթացակարգերի

մանրամասն նկարագրություն (մուտքի արտոնագիր ստանալուց մինչև շինթույլտվությունների և երկրի ծագման հավաստագրի ստացում):

- Կարևորելով ոչ միայն ընթացակարգերի մանրամասն ներկայացումը թվային հարթակում, այլև պետության կողմից տրամադրվող թույլտվությունների և արտոնագրերի առցանց տրամադրման հնարավորությունը՝ ներկայումս ՀՀ ՊԵԿ-ը նախաձեռնել է ապրանքների սահմանահատման գործընթացներում անհրաժեշտ փաստաթղթերի ստացման առցանց հարթակի մշակում: Այս հարթակը ևս կգործի «մեկ պատուհանի» սկզբունքով. գործարարները հնարավորություն կստանան առցանց եղանակով ներկայացնելու անհրաժեշտ փաստաթղթերը և ստանալու համապատասխան թույլտվություններն ու արտոնագրերը:
- Ներդրումային ծրագրերին աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ նախկինում ներդրված էր «մեկ պատուհանի» սկզբունքով ծառայությունների մատուցման մեխանիզմ, որն իրականացվում էր ներդրումների խրախուսման գործառույթն իրականացնող մարմիններում: Դրանց լուծարման պայմաններում այժմ քննարկվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կառուցվածքում վերոնշյալ մեխանիզմի տեղայնացման մոտեցումները: Այս հարցի առնչությամբ լավագույն լուծումները և առավել արդյունավետ մեխանիզմները մշակելու և ներդնելու նպատակով հայտնում ենք մեր պատրաստակամությունը՝ համագործակցելու ՀՀ ԱԺ պատգամավորների և շահագրգիռ բոլոր կողմերի հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներդրումային ծրագրերը տարաբնույթ են և հաճախակի պահանջում են տարբերակված մոտեցում՝ գտնում ենք, որ տվյալ խնդիրների համապարփակ կարգավորումը մեկ օրենքի շրջանակում շեշտակիորեն նվազեցնում է ծրագրերին աջակցություն ցուցաբերելու ճկունությունն ու արդյունավետությունը:

2. 4-րդ հոդվածով նախատեսվում է կարգավորում, համաձայն որի՝ ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության լիազոր մարմնի գործառույթ է սույն օրենքով սահմանված չափորոշիչները բավարարող ներդրումային ծրագրերի իրականացման ողջ շղթայի ընթացքում պետական կառավարման համակարգի մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ներդրումային ծրագրի իրագործման շրջանակներում պարտականությունների կատարման համակարգման և պետական վերահսկողության իրականացումը:

Այսինքն՝ տվյալ կարգավորման պարագայում ստացվում է, որ լիազոր մարմինը պետք է վերահսկողական գործառույթներ իրականացնի տեղական ինքնակառավարման

մարմինների նկատմամբ, որոնք իրականացնելու են հողի նպատակային նշանակության փոփոխությունը և այլ գործառույթներ:

Այս առումով գտնում ենք, որ նախագծի 4-րդ հոդվածն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ տվյալ դեպքում խոսքը պետք է լինի ոչ թե պետական վերահսկողության, այլ պարտա-կանությունների կատարման համակարգման մասին:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության լիազոր մարմնի գործառույթներից է ներդրումային ծրագրերի էլեկտրոնային դիտանցման միասնական համակարգի կառավարումը:

Այս առումով գտնում ենք, որ տվյալ դեպքում պարզ չէ, թե ինչ իրավական ակտով է կարգավորվելու էլեկտրոնային դիտանցման միասնական համակարգը:

3. Նախագիծը խնդրահարույց է նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Մասնավորապես՝ այդ սկզբունքի ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է նախագծով սահմանել «պետական աջակցություն» հասկացությունը, ինչպես նաև պետական աջակցության եղանակները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք օրենքի նախագծով քննարկվող հոդվածները թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2019 թվականի N 960 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության մասին» և «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-182-07.06.2019-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 18
Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Պ-182-07.06.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի նպատակը եւ կարգավորման առարկան

1. Սույն օրենքի նպատակը պետական կառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների եւ պարտականությունների համակարգված կատարման ապահովումն է ներդրումային ծրագրերի պետական աջակցության ոլորտում:

2. Սույն օրենքի կարգավորման առարկան օրենքի 2-րդ հոդվածով սահմանված չափորոշիչներին բավարարող ներդրումային ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված պետական մարմինների, ինչպես նաեւ այդ ծրագիրն իրականացնող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց եւ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ տվյալ ներդրումային ծրագրի շրջանակներում հարաբերություններն են:

Հոդված 2. Ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության չափորոշիչները

1. Սույն օրենքով պետական աջակցության ենթակա են Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության ազգային դրամով արտարժույթով, արժութային այլ տեսակներով, շարժական ու անշարժ գույքով, բաժնետոմսերով, պարտատոմսերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթերով, մտավոր սեփականության իրավունքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ներդրումների ցանկացած տեսակով 50 մլն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ներդրումային ծրագրերը:

Հոդված 3. Ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության կարգը եւ լիազոր մարմինը

1. Սույն օրենքի պահանջների կատարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը օրենքի ընդունումից հետո մեկամսյա ժամկետում:

2. Սույն օրենքի պահանջների կատարումը պետական լիազոր մարմինն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

3. Ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն է:

Հոդված 4. Ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության լիազոր մարմնի գործառույթները

Ներդրումային ծրագրերի իրականացման պետական աջակցության լիազոր մարմնի գործառույթներն են՝

1. մեկ պատուհանի սկզբունքով ներդրումային ծրագրերի պետական աջակցության իրականացումը

2. սույն օրենքով սահմանված չափորոշիչներին բավարարող ներդրումային ծրագրերի իրականացման ողջ շղթայի ընթացքում պետական կառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներդրումային ծրագրի իրագործման շրջանակներում պարտականությունների կատարման համակարգման եւ պետական վերահսկողության իրականացումը, այդ թվում՝ հողի նպատակային նշանակության փոփոխության, շինարարության թույլտվության, նախագծային փաստաթղթերի հաստատման, օբյեկտի նշանակության, անշարժ գույքի ձեռքբերման, արժեթղթերի եւ պարտատոմսերի ձեռքբերման, նոր կազմակերպության ստեղծման, գործող կազմակերպության վերակազմակերպման, լիցենզավորման եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ներդրումային գործընթացների նկատմամբ:

3. ներդրումային ծրագրի իրականացման գործընթացում պետական այլ մարմիններին ծրագրի իրականացմանն առընչվող դիմումների ներկայացումը եւ դրանց կատարման ընթացքի վերահսկումը

4. ներդրումային ծրագրերի էլեկտրոնային դիտանցման միասնական համակարգի կառավարումը:

Հոդված 5. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-182[1]-07.06.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-253-Ն օրենքի հավելվածի 15-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«15. Էկոնոմիկայի նախարարությունը մշակում եւ իրականացնում է տնտեսության ճյուղերի, այդ թվում՝ արդյունաբերության մրցունակության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման, արտաքին առեւտրի խթանման, արտահանման շուկաների հասանելիության ապահովման եւ արտահանման զարգացման, ներդրումների խթանման, որպես պետական լիազոր մարմին մեկ պատուհանի սկզբունքով ներդրումային ծրագրերի պետական աջակցության, ներդրումային ծրագրերի ընթացքի վերահսկողության, ներդրումային ծրագրերի իրականացման դիտանցման միասնական էլեկտրոնային համակարգի կառավարման, պետություն-մասնավոր գործընկերության զարգացման, ձեռնարկատիրության խթանման, փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման, զբոսաշրջության, մտավոր սեփականության պաշտպանության, տարածքային տնտեսական զարգացման, մրցակցային պայմանների բարելավման, որակի ենթակառուցվածքների զարգացման, սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացման, բուսաբուծության, անասնաբուծության, գյուղատնտեսական մթերքի վերամշակման, անասնաբուժության, բուսասանիտարիայի, պարենային անվտանգության, սննդամթերքի անվտանգության, գիտատեխնիկական ապահովման եւ խորհրդատվության, գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման, գյուղատնտեսական հողերի մշտադիտարկման, արդյունավետ օգտագործման, մելիորատիվ վիճակի բարելավման ու պահպանման եւ գյուղատնտեսությանը պետական աջակցության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ներկայումս բազմաթիվ ներդրումային ծրագրեր չեն իրագործվում պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում այդ ծրագրերի իրականացումն ապահովող տարբեր փաստաթղթերի (հողի նպատակային նշանակության փոփոխության, շինարարության թույլտվության, նախագծային փաստաթղթերի հաստատման, օբյեկտի նշանակության, լիցենզավորման եւ ներդրումային գործընթացներին առընչվող այլ փաստաթղթերի) հաճախ անհարկի եւ անհասկանալի մերժման, ուշացման կամ անարձագանք թողնելու պատրվակով:

Օրենքի նախագծերի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի իրական պետական աջակցության ապահովման անհրաժեշտությամբ, ինչպես նաեւ պետական կառավարման տարբեր մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ հարաբերությունների հստակեցմամբ, օրենքով պետական մարմինների ներկայացուցիչների պատասխանատվության ինստիտուտի սահմանմամբ ներդրումային ծրագրերի իրականացման շրջանակներում:

Օրենքի նախագծերով կոնկրետ լիազորություններ են վերապահվում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը մեկ պատուհանի սկզբունքով ներդրումային ծրագրերի իրականացումն ապահովող համապատասխան փաստաթղթերի տրամադրման եւ համապատասխան միջոցառումների իրականացման շրջանակներում: